

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի շնորհավորական ուղերձը Ուսուցչի օրվա առթիվ

Հարգելի մանկավարժներ

Ձեզ է վիճակված մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության պատվաբեր գործը, որը նախելառաջ պահանջում է սեր ու նվիրում, ջանք ու պատասխանատվություն: Դուք եք սուրբ Մաշտոցի, հայոց դպրության, մտքի ու գիտության ականավոր դեմքերի գործի շարունակողները, ուսուցչի վաստակն ունունը բարձր պահողները: Ուսուցչի օրվա առթիվ ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ, ցանկանում խաղաղ ու ապահով հայրենիք, անձնական ու ընտանեկան երջանկություն, աշխատանքային հաջողություններ, եռանդ ու նվիրում:

Հարգանքներով՝ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան